

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից  
2015 թվականի հունվարի 29-ին  
Պետական գրանցման համարը 3001560



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 47 -Ն

ք.Ստեփանակերտ

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ  
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՃԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ  
ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՄՈՒՏՔԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ  
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 30-Ի ԹԻՎ 35/138 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**

1. Սահմանել, որ

1) տարածքային ընտրական հանձնաժողովը ստուգում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, նշում կատարում արձանագրության ընդունման ամսաթվի, ժամի մասին, տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը ստորագրում և կնքում է արձանագրությունը.

2) տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին ապահովում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության տվյալների մուտքագրումը համակարգիչ քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում և պատասխանատու է այդ տվյալների ճշգրիտ մուտքագրման համար.

3) տվյալների մուտքագրումը համակարգիչ իրականացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակիցը.

4) տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության յուրաքանչյուր տվյալ մուտքագրվում է քվեարկության արդյունքների աղյուսակի՝ այդ տվյալի համար նախատեսված դաշտում, որն ունի հետևյալ տեսքը.

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Շտաբ-տարածք N	Տեղամաս N	Քվեարկության օրն ընտրական տեղակայված ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Հստակացվելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Հաշվառում չունեցող ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Ստացիոնար բուժօգնության ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Ձերբակալված անձանց պահելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Հնարողների հիմնական ցուցակի ընտրողների թիվը	Հնարողների ընտրողների թիվը	Քվեարկության մասնակիցների թիվը	ՏՀՀ-ների հատկացված թվաթերթիկների թիվը	Մարված թվաթերթիկների թիվը	Անվավեր թվաթերթիկների թիվը	Ցուրանցյուր թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ թվաթերթիկների թիվը	Թեկնածուին, կուսակցությանը կողմ կուսակցությունների դաշինքին դեմ թվաթերթիկների թիվը	Քվեատուփում առկա սահմանված անուշի թվաթերթիկների թիվը	Անճշտությունների չափը	

5) քվեարկության արդյունքների աղյուսակի վերնագիրը պարունակում է ընտրության անվանումը, տեղամասային ընտրական հանձնաժողովի համարը.

6) տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան 3 ժամը մեկ, համակարգչի օգնությամբ կատարում է տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորում ու տպագրում այն՝ ըստ ընտրական տեղամասերի.

7) տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, անհապաղ փակցվում է տարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում.

8) ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակ՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով.

9) համակարգիչ մուտքագրված՝ տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության տվյալները տարածքային ընտրական հանձնաժողովներից կենտրոնական ընտրական հանձնաժողով տեղափոխվում են էլեկտրոնային եղանակով և թղթային տարբերակով.

10) տարածքային ընտրական հանձնաժողովը տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ստանում է ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունները:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 30-ի «Տարածքային ընտրական հանձնաժողովում տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության տվյալները աղյուսակավորելու և համակարգչի առկայության դեպքում համակարգիչ մուտքագրելու կարգը սահմանելու մասին» թիվ 35/138 որոշումը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ս. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**